With funding from Austrian Development Cooperation

Caritas Austria

CARITAS KOSOVA

Հայկական Կարիտաս Armenian Caritas

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ժամանակացույց՝ հոկտեմբեր, 2022

Աշխատանք՝ Ֆիլմի նկարահանում

Վայրը՝ Շիրակի մարզ, Հայաստան

Սկիզբը՝ հոկտեմբեր, 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն տեխնիկական առաջադրանքները սահմանում են 1 ֆիլմի նկարահանման պահանջները: Աշխատանքը իրականացվելու է Ավստրիական զարգացման գործակալության և Կարիտաս Ավստրիայի կողմից ֆինանսավորվող «Իմ իրավունքը: Ներառական կրթություն Հայաստանում և Կոսովոյում» ծրագրի շրջանակներում:

Վերոնշյալ ծրագիրը իրականացվում է «Հայկական Կարիտաս» բիկ-ի կողմից: Ծրագրի նպատակն է նպաստել ներառական, հավասար և որակյալ կրթության իրականացմանը՝ համաձայն Կայուն զարգացման նպատակ 4-ի, ՄԱԿ-ի երեխաների իրավունքի կոնվենցիայի հոդված 28-ի և հոդված 23-ի և ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի հոդված 24-ի:

Ծրագրի շրջանակներում նկարահանվելու է 1 ֆիլմ, որի նպատակն է գործնական օրինակներով ցույց տալ, թե ինչպես կարելի է աշխատել հաշմանդամություն ունեցող երեխաների (ՀՈՒԵ) հետ դասասենյակում դասապրոցեսի ընթացքում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

«Հայկական Կարիտաս»-ը հիմնվել է 1995 թ.-ին Հայ Կաթողիկե Եկեղեցու կողմից: «Հայկական Կարիտաս»-ը, ունենալով «Բարեգործական ՀԿ-ի կարգավիճակ», կենտրոնացնում է իր ներքին ջանքերը սոցիալական պաշտպանության և խնամքի, համայնքային զարգացման ծրագրերի վրա, որպեսզի բարելավվի ապրելակերպի և կրթական պայմանները, առավել խոցելի սոցիալական խմբերի առողջությունը, իրականացնում է կայուն վերաինտեգրման միջոցառումներ վերադարձողների համար, մարդասիրական և զարգացման գործողություններ:

Իր գործունեության սկզբից ի վեր, «Հայկական Կարիտաս»-ը տրամադրել է անմիջական աջակցություն հազարավոր մարդկանց Հայաստանի 125 համայնքներում: «Ծառայել տարբեր խոցելի խմբերի սիրով և սրտացավությամբ՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը». սա է առաքելությունը, որ իրականացնում է «Հայկական Կարիտաս»-ը: Վերջինիս տեսլականն է լինել հզոր և կարեւոր դերակատար Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության և սոցիալական պաշտպանության հարցում:
«Հայկական Կարիտաս»-ի գլխավոր գրասենյակը գտնվում է Գյումրիում՝ Հայաստանում, և ունի 230 աշխատակից և կամավոր: «Հայկական Կարիտաս»-ը շարունակում է ընդլայնել իր ծառայությունները Հայաստանում և գործում է Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի մարզերում, ինչպես նաև Երեւան քաղաքում: Այսօր «Հայկական Կարիտասը» հպարտանում է ամուր ինստիտուցիոնալ բազայով, հստակ սահմանված առաքելությամբ և տեսլականով, ինչպես նաև իր բազմաթիվ տեղական և միջազգային գործընկերներով: Այն պահպանում է աճի հզոր ներուժ, որպեսզի ծառայի իր շահառուներին աճող կարողություններով:
«Հայկական Կարիտաս»-ը Կարիտասի Ինտերնացիոնալիզի և Կարիտաս Եվրոպայի անդամ է՝ ավելի քան 160 անդամից կազմված Կարիտասի միջազգային ցանց, որն աջակցություն և օգնություն է տրամադրում արտակարգ իրավիճակներում աշխարհի բոլոր երկրներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ֆիլմի նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը ներառական կրթության կարևորության և յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքի վերաբերյալ: Ֆիլմը մանկավարժների համար ուղեցույց կհանդիսանա՝ դասապրոցեսի ընթացքում աշխատելու հաշմանդամություն ունեցող երեխաների հետ: Սա նախատեսվում է անել ծրագրում ընդգրկված երեխաների, նրանց դասընկերների, ուսուցիչների և դպրոցական համայնքի այլ անդամների դրական օրինակների ցուցադրման միջոցով:

- Ընտրված կամակերպությունը պետք է ներկայացնի ֆիլմի սցենար, որը պետք է հաստատվի Հայկական Կարիտասի կողմից:

- Հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավվածությունը ֆիլմի մեջ պետք է համապատասխանի մարդու իրավունքների չափորոշիչներին:
- Ֆիլմը պետք է նկարահանվի հայերեն՝ անգլերեն ենթագրերով, պետք է համապատասխանի բարձր ստանդարտներին, լինի դինամիկ և հետաքրքիր ոճային լուծումներով: Ֆիլմի ամբողջական տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն:
- Ֆիլմի ամբողջական պատրաստումը և վերջնական տարբերակի ներկայացումը, ներառյալ սցենարի մշակում, նկարահանում, մոնտաժ, հնչյունավորում և այլն, իրականացվելու է ընտրված կազմակերպության կողմից: Արդյունքում ներկայացվելու է հանրությանը ցուցադրելու պատրաստ բարձրորակ աշխատանք HD տեխնոլոգիայով: Աշխատանքի իրականացման ողջ ընթացքը վերահսկվելու է Հայկական Կարիտասի նշված ծրագրի ղեկավարի և համակարգողի կողմից, ովքեր շարունակաբար ներկայացնելու են իրենց առաջարկները և դիտարկումները:
- Աշխատանքի իրականացման ընթացքում ընտրված կազմակերպությունը պետք է հետևի Ավստրիական զարգացման գործակալության և Կարիտաս Ավստրայի հաղորդակցության և տեսանելիության պահանջներին:
- Վերջնական արդյունքը (1 ֆիլմ) պետք է տրամադրվի Հայկական Կարիտասին 4 DVD սկավառակներով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

1. Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ֆիլմերի/սոցիալական գովազդների պատրաստման ոլորտում:
2. Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ բարձր որակի տեխնիկայի հասանելիություն:
3. Ֆիքսված ժամանակահատվածում աշխատելու և բարձորակ արդյունք ներկայացնելու կարողություն:
4. Հայերենով հարցազրույցներ վարելու կարողություն (անգլերենով ենթագրեր ներկայացնելու հնարավորությունը կդիտվի առավելություն)
5. Երեխաների պաշտպանության կամ հաշմանդամության ոլորտում ունեցած աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն:

ԸՆՏՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ՝

1. Նախկինում կատարած նմանատիպ աշխատանքի 2 օրինակ:
2. Աշխատանքի համար նախատեսված սարքավորումների ցանկը, ներառյալ տեսախցիկ, լուսային, ձայնային մասը ապահովող տեխնիկա, և այլ:

3. Աշխատանքը իրականացնող հիմնական թիմի ինքնակենսագրականները և հիմնական պարտականությունները:
4. Նշված աշխատանքի կատարման համար գնային առաջարկ (բյուջե):

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑԸ

1. Աշխատանքի մանրամասն ժամանակացույցը և աշխատանքային պլանը պետք է ներկայացվի պայմանագրի ստորագրումից հետո 5 օրվա ընթացքում:
2. Ֆիլմը պետք է նկարահանվի և վերջական տեսքով ներկայացվի հոկտեմբեր ամսվա ընթացքում:
3. Ֆիլմի վերջնական տարբերակը պետք է ներկայացվի պատվիրատուին՝ Հայկական Կարիտասին: Աշխատանքը կհամարվի ընդունված Հայկական Կարիտասի հաստատումից հետո:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ընտրության գործընթացին մասնակցելու համար կազմակերպությունը պետք է ներկայացնի իր հայտը Հայկական Կարիտասի էլ. հասցեով՝ info@caritas.am CC-ում դնելով g.norikyan@caritas.am, z.hovhannisyan@caritas.am: Ներկայացված առաջարկը պետք է բավարարի սույն տեխնիկական առաջադրանքների պահանջներին:

Թեկնածուները արդյունքների մասին կտեղեկացվեն ներկայացված առաջարկերի քննարկումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտերը կարող են ներկայացվել հայերենով կամ անգլերենով:

Նշված պահանջներին չբավարարող և ժամկետից ուշ ներկայացվաշ հայտերը չեն դիտարկվի:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ – 15 հոկտեմբեր, 2022